ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **29 ՀՈՒԼՍ 2021թ.**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 22 հուլիսի 2021 թվականի N 1–Լ որոշմամբ՝ հեռակա քվեարկությամբ, տեղի ունեցավ Կառավարման խորհրդի նիստ: Հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021թ-ի հուլիսի 23-ին և ավարտվել՝ հուլիսի 27-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամներին:

Կառավարման խորհրդի նիստին մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Անդրանիկ Փիլոյանը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ս.Պապիկյանը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյանը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Կ. Բրուտյանը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ա.Ղուլարյանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս.Թովմասյանը ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար

Ա.Դանիելյանը Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ

Մ.Սանդոյանը « ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Ա. Կարապետյանը «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն

Կառավարման խորհրդի նիստին և քվարկությանը չեն մասնակցել Կառավարման խորհրդի անդամներ՝

Վ.Դանիելյանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա"Ավանեսյանը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Մ.Հովհաննիսյանը «Ճարտարապետության և շինարարության ՀՀ ազգային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ:

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի 2022 թվականի բյուջետային հայտի նախագծին (փոփոխություններով) և կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների 2022 թվականի ֆինանսավորման մեջ փոփոխություններ և լրացումների կատարմանը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի հաստիքացուցակին՝ համաձայն հավելված 2-ի:

Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Անդրանիկ Փիլոյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց դեմ,
2. Ս.Պապիկյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ՝ (օրկարգի 2-րդ հարցի վերաբերյալ վերապահումով),
4. Կ. Բրուտյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց դեմ,
5. Ա.Ղուլարյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
6. Ս. Թովմասյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,

7. Ա.Կարապետյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
8. Ա. Դանիելյանը 1-ին, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
9. Մ. Սանդոյանը 1-ն, 2-րդ հարցերին քվեարկեց կողմ :

Կառավարման խորհրդի անդամ Ա.Ասոյանը օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ քվեարկել է կողմ՝ վերապահումով : Կառավարման խորհրդի անդամ Ա.Ասոյանի դիտարկումները կցված են արձանագրությանը և համարվում են դրա անբաժնելի մասը:
Կառավարման խորհրդի անդամ Կ. Բրուտյանի դիտարկումներն օրակարգի երկու հարցերի վերաբերյալ կցված են արձանագրությանը և համարվում են դրա անբաժանելի մասը:
Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո

Կառավարման խորհուրդը որոշեց.
1. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի 2022 թվականի բյուջետային հայտի նախագծին (փոփոխություններով) և կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների 2022 թվականի ֆինանսավորման մեջ փոփոխություններ և լրացումների կատարմանը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի հաստիքացուցակին՝ համաձայն հավելված 2-ի:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Ա. Փիլոյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ն.Մկրտչյան**
ստորագրություն